

Հո-Հանես  
ԿՐԱՅԱՆ

ԿՐԵՆԱԿԱՆ

ՍԽԵԼԳԱՎԻ  
1948

Обязательный экземпляр

891.99

13438

4-29

Чиркунин 3

Зуртсанулин

ՀՈՎՀԱՆԵՆԵՄ ԿԱՐԱՅԱՆ

891.99

4-29

ԱՅՈՒՏՎԱԾ Է 1961 Ք.

Հ Ա Յ Ր Ե Ն Ա Կ Ա Ն

13438.

28229



Սախեյգամի  
1948— Թբիլիսի

Պատասխանատու

խմբագիր՝ Ռ. ԱՂԱԲՍԵ

## ԿԱՐՄԻՐ ՌԱԶՄԻԿՆԵՐԻ ԵՐԳԸ

Մենք ծնունդ առանք երկունքից երկրի,  
Կոփվեցինք կռվի հրով ու շանթով,  
Հողմից թե՛վ առանք, որոտից՝ կորով,  
Մղվեցինք առաջ բանակ առ բանակ.

Մենք մեր դրոշին գրեցինք՝ Ստալին  
Եվ խավարի դեմ պարզեցինք անդող  
Եվ հաղթանակը կոչվեց Ստալին  
Եվ Ստալինը՝ ինքը—հաղթանակ:

Մենք խաղաղության ծաղիկն անեցրինք,  
Ցողեցինք արդար բրտինքի ցողով,  
Նետեցինք երկնին ցոլքը մեր սրտի,  
Շաղ տվինք երկրին աստղեր անբանակ.

Սուաջնորդը մեզ իր սրտից հրկեզ  
Հուրե՛ր պարզեվեց խնդությամբ ողորդ  
Եվ հաղթանակը կոչվեց Ստալին  
Եվ Ստալինը՝ ինքը—հաղթանակ:

Իսկ այսօր, ահա՛, մահվան դիվահար  
Ոնմակների դեմ ելել ենք նորեն.  
Եվ Նա՛ է կրկին՝ Ստալինը—դրոշ՝  
Տանում զնդերը մեր աստղաբանակ.

Կհաղթե՛նք կրկին. եվ երբ կրեմլից  
Մի նոր հաղթանակ արվին շեփորե՛  
Թո՛ղ հաղթանակն այդ կոչվի Ստալին  
Եվ Ստալինը՝ ինքը—Հաղթանակ...

## ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՌԱԶՄԵՐԳ

Շատ անգամ ես եկել, հայրենական զարուն,  
Օ՛, կրել ենք մենք բեզ մեր ձեռքերի վրա.  
Չենք սպասել երբեք բախտի հոժար գալուն՝  
Մուրհը բարին զարկել ու կորզել ենք կրակ:

Պայքարով ենք զուգել ամեն բար ու մացառ,  
Ամեն հասկ ու ակոս բրտինքով ենք ցողել.  
Համայնական հերկի ամեն տողում պայծառ՝  
Մեր պայքարի անջինջ պատմությունն ենք թողել:

Մենք ենք վառել անմահ Առաջնորդի ձեռքով՝  
Հավերժական զարնան արեւները բոլոր,  
Մառույցները փշրել դյուցազնական զարկով,  
Պաղ բեվեռին անգամ տվել նոր կյանք, նոր օր...

Եվ այդ է, որ, ահա, թե ձմեռ, թե ամառ.  
Մեզ երկինքն է ժպտում երկրիս դաշտ ու սարում,  
Այդ է, ա՛յդ է կրկին, որ թշնամու համար  
Արեւ չկա՝ մեզ մոտ թե ձմեռ, թե զարուն...

Այո՛, զո՛ւր են գայլերն իրենց հույսը դրել  
Բացվող զարնան վրա, ու վառ ծաղիկների—  
Նրան, ով ողջ կյանքում լույսի դեմ է կռվել՝  
Փոթորկածին ու հաղթ զարունը չի՛ ների...

Գարունը՝ այդ մենք ենք... լի եռանդով եռուն  
Մեր շարքերը՝ զարնան գետեր փոթորկալից.—  
Իսկ դո՛ւր, խավար իժեր, մեր լույս ճամբից հեռո՛ւ,  
Հեռո՛ւ... Կարմիր զարնան բանակներն են զալիս...

1942 թ.

## ՀՐԱՎԱՌ ՊՈՐՏՐԵՆ

(Ստալինի հրավառ պորտրեն կոմերիտական  
ժառուղում, թրիլսիում)

Ամեն գիշեր, իմ քաղաքի  
Որ մատում էլ լինեմ ես՝  
Քո հրավառ նկարն անգին  
Ինձ է նայում արփու պես:

Ասես հսկա մի հայելի՝  
Լեռան լանջին, ծաղկանց մեջ.—  
Ջինջ, հեռավոր Քո պատկերի  
Ցուքն է նետում սրտիս մեջ:

Նայում եմ ես, նայում է ինձ,  
Ու թվում է, թե անվերջ  
Դո՛ւ ես նայում ինձ Մոսկովից,  
Հերիաթական, վեհ ու մե՛ծ:

Հոգիս անհուն թինդ է առնում,  
Շուրջս ծփում լույսի ծով,  
Մութ գիշերն է ցերեկ դառնում  
Արեւ-փառքիդ զնգոցով:

Այսպես, անվերջ, իմ քաղաքին  
Քո պատկերն է տալիս լույս,  
Մինչ Քո սի՛րտն է ողջ աշխարհին  
Բացել բախտի արշալույս...

## ՏԱՂ ԱՆՊԱՐՏՈՒԹՅԱՆ

Դո՛ւ, իմ Բանա՛կ Սովետական,  
Ժողովրդիս բազուկ ու թեւ,  
Միլիոնալիք փառքի օվկիան,  
Հայրենիքիս թիկունք պարթեւի.  
Երջանկության կանաչ դու զահ,  
Ազատության կայծակ-բազե,  
Արդարության պողպատ զրահ,  
Կարնան երկինք կայծակնազեն.—

Փառքիդ մասին լիներ մի տաղ՝  
Հրետանուդ հունչն ունենար,  
Արծիվներիդ աստեղաբաղ  
Պողպատ սրտի շունչն ունենար,  
Զրահապատ հաղթ նավերիդ  
Օվկիան կիսող թափն ունենար,  
Փառքով դարձած հերոսներիդ  
Հոգու ծիծաղ-ծափն ունենար...

Բազմալեզու ու միասիրտ  
Լեռ-շարքերիդ ծուլով ելներ,  
Մրրկածուփ օվկիան-սրտիդ  
Հաղթ արշավի սույրով ելներ,  
Ընդդեմ չարի ելած անդող  
Հերոսներիդ հույզով ելներ,  
Խաղաղ ժամին նառազայթող  
Զինջ խոհերիդ լույսով ելներ...

Զկա՛, չկա՛ այդպես մի տաղ.  
Էլի դո՛ւ ես երգն այդ խրոխտ,  
Էլի անպարտ հրետանիդ  
Սիմֆոնիան բո երկնադղորդ,  
Էլի պողպատ բազեներիդ  
Կանչն է հզոր՝ կանչդ անբեկ,  
Էլի դո՛ւ ես երգն այդ, էլի՛,  
Զկա՛, չկա՛ այդպես մի երգ...

Բայց կա մի բառ, անո՛ւն կա մի—  
Քեզ հաղթության երգ դարձնող,  
Հայրենիբի՛, ժողովրդի  
Ազատարար ձե՛ռք դարձնող,  
Ինչպես ալ վարդ՝ բացված սրտիդ  
Եվ դրոշիդ ամեն ծալին.  
Հաղթանակի անունն է այդ,  
Երգը բո մեծ՝ Արեւ-Ստալին...

1945 թ.

## ՄԵՋ ՀԵՏ ԵՔ ԴՈՒՔ...

Մահով անմահացած հերոսների թմբեր—  
Հրացանը ձեռքիս ձե՛զ եմ եկել այցի.  
Ձեր անբարբառ ցասման հուրն եմ ահա ըմպել  
Ու ցասումս վառել ձեր վրեժի կայծից...

Փարվում եմ արդ կրծքով ձեր կրծքերին եռուն,  
Սրտով ըզգում անձայն աղաղակը նրանց.  
Տրորում եմ տենդով հրացանն իմ ձեռքում  
Ու լարում եմ աչքիս սվինները սրած...

Դուք թմբե՞ր եք փոքրիկ, թե՞ վեզուվներ հզոր.  
Ռրբան բարձր է հնչում լուսթյունը ձեր վեհ...  
Դուք մեզ հետ եք, ահա՛, դուք մեզ հե՛տ եք այսօր—  
Ձեր երկնաթիռ հրով մեր հրին եք մերվել:

Դուք չէ՛ք լուռ, բանզի դիակներ չե՛ն թաղված—  
Ականներ են պահված ձեր բորբ ընդերքներում.  
Ստողերի տեղ նրանց հուր սրերն են կախված,  
Նրանց, որոնք ընկան՝ ինչպես ուումքն է ընկնում:

Հո՛ւր է կամբը հիմի, ամեն մի խոհ—զնդա՛կ,  
Դիպուկ նետված նունակ՝ ամեն բառը երգչի.  
Ո՛վ շիրիմներ՛ր... դուք էլ մեզ հետ պիտի թնդա՛ք—  
Մինչ կրակից մեր թեժ՝ այրվի իժը վերջին...  

---

1942 թ.

## Ս Ա Հ Մ Ա Ն Ի Վ Ր Ա

Այստե՛ղ սկսվեց... հենց այս ծառի մոտ  
Պայթեց առաջին ռումբը մահահոտ...  
Հենց ա՛յս գետակի խաղաղ կարկաչին  
Չուլվեց գայլերի ոռնոցն առաջին...  
Այստե՛ղ սկսվեց .. օ՛, հենց այս ծառից  
Կախեցին նրան, քաջին պանծալի...  
Նրա՛ն, որ բոլոր օրերն իր ջահել  
Մարդկության համար վառեց ոնց ջահեր ..  
Նրա՛ն, կոմերիտ էն ջահել տղին,  
Որ փառքով պատեց իր կյանքի ուղին,  
Որ ոսկե ծովում հայրենի արտի՝  
Աճել էր, որպես մի դալար բարդի...  
Եվ նրա՛ն, անմեղ այն ջինջ աղջկան,  
Որ չուզեց դառնալ միայն լուռ վկան  
Նրանց սեվ ոճրի... ու կամքով խիզախ  
Առած հրացան՝ դարձավ պարտիզան...  
Այո՛, այս բերրի, պարարտ հողն էր հենց,  
Որ երեք տարի ծաղիկ չծնեց,  
Որ իրեն զրկում պահեց ոնց ական  
Դիակներ և՛վ սուրբ, ե՛վ հերոսական...

Այստե՛ղ սկսվեց... նայեցե՛ք, ահա՛ —  
Արտի պես՝ ծեծված ու կարկտահար  
Հողը փորփրած, հողը՝ լերկ ու մերկ,  
Մոր վերքի նման բաց ու արնաներկ...  
Նայեցեք այստե՛ղ. այս ծորակը մութ

Ծածկել է բանի՛ ոճիրներ անգութ,  
 Ծածկել է, զսպել իր սրտում հազիվ,  
 Սպասել հույսով, որ մի օր ասի՛...  
 Իսկ նրա եզրին կբված այս ուռին,  
 Որբա՛ն է լացել ու թախծել լռին,  
 Որպես վիրավոր, ալիհներ մի մայր՝  
 Նայել մեր նամբին հույզերով անմար...  
 Դե՛, հերիք է արդ, եկել ենք, եկել,  
 Մեր սրտում ցասման ու սիրո երգեր,  
 Եվ կուզենք ճշալ, ամենքին ասել, —  
 — Օ՛, զուր չեք, զուր չեք դուք մեզ սպասել,  
 Եկել ենք, ահա, եկել մրրկած,  
 Հաղթութ՛յան կարմիր դրոշը զրկած,  
 Եկել ենք, նորեն անպարտ եվ ուժեղ,  
 Եկել, որ ձեր խոր վերքերը բուժենք,  
 Բուժենք, համբուրենք ու անցնենք առաջ՝  
 Մեր հաղթ ուսերին արեզակն առած  
 Դիմենք դեպ առաջ, դեպի արեվմուտք  
 Ու բացենք բախտի մի նոր տարեմուտ...

1941 թ.

## ՀԱՂԹԱՆԱԿԻ ՏԱՐԵՄՈՒՏ

Վերջին թերթիկն օրացույցի  
 Ահա պոկում, նետում եմ վար...  
 Այսպե՛ս, շուտո՛վ, մեր զարկերից  
 Կնկնի վերջին ոտխը չար...

Եվ ինչպես իմ ձեռքով անահ  
 Օրացույցն է ելնում այս նոր՝  
 Բյուր ձեռքերով կբարձրանա  
 Հաղթանակի տարին հզոր...

1944 թ.

## ԱՐԵՎԻ ՔԱՆՌԱԿԸ

Հայրենի հողում  
Ինձ այնքա՛ն հանաչ՝  
Մի լեռ կա՛ շողուն  
Կանջերով կանաչ.  
Ու հանց երկրածին  
Մի անմար արևով՝  
Այդ լեռան քաշին  
Արձան կա քարե...

Կանգնած է նա հաղթ՝  
Զինջ խոհր դեմքին,  
Որպես կուռ պահակ  
Դարերի շեմքին.  
Լեռ կուրծքը հպած  
Արևվի դիսկին,  
Հզոր ու հպարտ.  
Զի՛ շարժվում իսկի...

Պայծառ է օրը  
Ու երկինքը ջինջ  
Ասես թե խորը  
Մի ծով է վեհիտ...  
Անամպ ու թեթեվ  
Հայելին նրա՛  
Իր շողքն է նետել  
Աշխարհի վրա...

Քայց ահա՛, նորեն  
Այս խաղաղ ժամին  
Ելնո՛ւմ ուժգնորեն,  
Ունո՛ւմ է քամին,  
Չարկում շեշտակի  
Ամպրոպը կրկին, —  
Չարդվում քանդակի  
Ամրակուռ կրծքին...

Իսկ նա՛ միշտ հպարտ՝  
Ձի՛ շարժվում իսկի...  
Եվ կուրծքը հպած  
Սրեվի դիսկին,  
Հանց քարե պահակ՝  
Ձինջ խոհը դեմքին  
Կանգնած է խաղաղ  
Դարերի շեմքին...

Եվ միշտ առնասիրտ,  
Միշտ վեհ ու պարթեվ,  
Հոգով անբասիր  
Եվ սրտում՝ արեվ, —  
Այս լեռան բաշին  
Քանդակն այս քարե՛  
Կապրի անհաշիվ  
Դարե՛ր ու դարե՛ր...

1940 թ.

## Հ Ե Ր Ո Ս Ա Ց Ո Ւ Մ

(Ռազմիկի հուշերից)

Գրո՛հ տվինք... բայց ըսպասի՛ր.—  
Գիտե՞ս ինչ է գրոհը թե՛ժ՝  
Երբ քո դիմաց չարն է զազիր  
Եվ վրեժը՝ հուր սրտիդ մեջ...

Գրո՛հ տվինք... ու երբ վառված  
Դարձել էինք մի-մի հերոս՝  
Ֆաշիստական ուռմբը հանկարծ  
Ջարդեց թեպը իմ քնկերոջ...

Բայց կոկորդուսն ճիչը զսպած  
Նա մեզ նայեց... եվ նույն պահին  
Նորեն թափով նետվեց առաջ  
Ճակատը բաց՝ ընդդեմ մահի...

Թռա՛վ միջով կրակների,  
Հասավ զձին նենգ թշնամու,  
Նետե՛ց փունջը նռնակների,  
Մարդիկ ու տանկ տվեց բամուն

Եվ որոտաց մեր բյուրավոր  
Ուռաների հողմի ներքո—  
— Հաղթանակ է մեզ հարկավոր՝  
Պիտի խլենք մեր հաղթ ձեռքով... 18

## ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՍԻՐՏՆ Է ԽՈՍՈՒՄ

Ինչպես ծանոթ ձայնը իմ մոր,  
Ինչպես անուշ երգը հովի՛  
Ես լսում եմ հույզով մի խոր—  
Ղողանջները մայր Մոսկովի.

— Մոսկվա, մայր իմ, այդ բո անգին  
Ղողանջներում բարձր ու զնգուն՝  
Ես իմ հպարտ Հայրենիքի  
Պողպատ սրտի զարկն եմ զգում:

Բարձրախոսը լռեց մի պահ...  
Անուշ տանջանքն ըսպասումի  
Միլիոն սրտեր սանձեց ահա,  
Միլիոն մտքեր ձուլեց ի մի.

Քե՛զ են լսում ինձ հետ հիմի  
Նրա՛նք, որոնք Օղերն անցած՝  
Դռների մոտ նենգ Բեռլինի  
Մարտ են մղում կայծակնացած...

Մայր բաղաքն է խոսում կրկին...  
Եվ բառերն այդ կուռ ու հատու  
Բերդն են կռում հաղթանակի,  
Վառ ցնծության կայծեր ցայտում.

Առաջնորդի խոսքն է հուժկու,  
Որ շաչում է որպես սուսեր,  
Ոսոխներին մահ է գուժում  
Ու մեր սրտում վառում լույսեր:

Մինչ Կրեմլի ժամացույցի  
Չարկերի հետ խաղաղ ու խոր՝  
Որոտներով օդն են ցնցում  
Թնդանոթներ հարյուրավոր,

Որպես գույն-գույն շատրվաններ  
Հրթիռներն են վեր խոյանում,  
Հաղթ Բանակի փառքի մասին  
Աստղերի հետ զրույց անում.—

Գիտե՛մ, շուտով այդ հարազատ  
Սայլուտների կարմիր բոցից  
Կելնի լուսայգն արեգնազարդ  
Եվ բյուր սրտեր կալեկոծի.

Շուտո՛վ, շուտով Հայրենիքիս  
Սեզ կատարից արեվամերձ—  
Կղզրդա՛ հաղթանակի  
Սայլուտների սայլուտը մեծ...

1945 թ.

## Բ Ա Ղ Ր Ա Մ Յ Ա Ն Ի Ն

Ես քեզ Դավթի հետ չեմ համեմատի.  
Դու ուժդ առար ստալինյան դարից  
Եվ անգամ չնչին շարժումը մատիդ՝  
Բյուր Դավիթներին ընթացք է տալիս:

Օ, բա՛րդ է այսօր մեր դարը այնպես,  
Եվ բարդության մեջ այս բազմախորհուրդ՝  
Սրից էլ ուժգին հանանչում է վես  
Հանճարը բաջի՝ ոլորտներում մութ:

Ես քեզ Դավթի հետ չեմ համեմատի.  
Թեկուզ քո սրտում արյունն է նրա,  
Թեկուզ քո ձեռքում Կայծակն է Դավթի,  
Բայց ա՛յլ արեվ կա քո կրծքի վրա:

Այդ արեվը ջինջ՝ Ստալինն է վառել  
Ու որպես վահան կախել քո կրծքին.  
Վայրկյանների պես թն անցնեն դարեր՝  
Դու նրան փարած կշողա՛ս կրկին...

Մութ համբաններում նա լույս կտա քեզ,  
Դժվար մարտերում կդարձնի անպարտ,  
Հեքիաթի անգին թալիսմանի պես  
Քո ճամբի փուշը կդարձնի ալ-վարդ:

Տե՛ս, հավերժ բախտի ուղին են բացում  
Քեզ հետ բազմազգի կտրիճներն ընտիր  
Եվ անգամ որդին մեծ Կոլխիդացու՝  
Կանգնած է կողքիդ որպես Ավթանդիլ...

Ո՛չ, քեզ Դավթի հետ չեմ համեմատի...  
Դու ուժդ առար ստալինյան դարից  
Եվ անգամ չնչին շարժումը մատիդ՝  
Բյուր Դավիթներին ընթացք է տալիս:

## ԻՄ „ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻՆ“

Երբ ասում են, թե դու մեզ հետ էիր մեծ կռվի պահին,  
Մահվան աչքերին հառած աչքերը քո արծրվային՝  
Հիշում եմ մի դեպք, որ պատմել է ինձ ընկերն իմ արի—  
Մի հայ լեյտենանտ՝ հաղթությամբ դարձած դաշտից  
պայքարի:

\* \* \*

Կռիվ էր դաժան... մեր խրամատում պայթեց մի նռնակ,  
Նայեցի կողքիս. — սերժանտն էր ընկած անշարժ, գլխահակ-  
Հենել էր պատին փողն ավտոմատի, մինչ նրա հողքին  
Ընկած էր արնոտ թերթերով մի զիրք՝ իմ «Մաքսիմ  
Գորկին»...

Ես լուռ սեղմեցի արնոտված ճերմակ թերթերը կրծքիս  
եվ մեր հաղթականչ ուռաների հետ, մրմուռը սրտիս  
Սլացա առաջ... օ՛, զիրքն այդ դարձավ զրահ իմ կրծքին՝  
Ինձ հետ էր կռվում, ինձ հետ էր հաղթում իմ «Մաքսիմ,  
Գորկին»...

Իսկ երբ խավարից ելավ հաղթության արեգակն անպարտ՝  
Տուն դարձա ես էլ, զրադարանս ներս մտա հպարտ,  
Եվ բյուր զրքերի ալիքներից վեր պարզեցի կրկին  
Խոլ մրրիկների խոլ մրրկահավ իմ «Մաքսիմ Գորկին»...

1948 թ.



## ՄԱՐՏԻԿԻ ՀՈՒՅՋԵՐԻՅ

Զորանոցումն եմ, խաղաղ է իմ շուրջ.  
Մաքրում եմ սիրով հրացանը իմ.  
Նայում եմ նրան ու որպես անուրջ  
Վերհիշում նրա կրակն առաջին:

Լեռան ըստորոտ, փռվել է դաշտը  
Տոնական գույն-գույն թավիշը հագին.  
Առաջին անգամ այսօր մեր վաշտը  
Բնության զրկում ելավ վարժանքի.

Անունս տվին... հրացանն առած  
Հաշվում եմ արդեն զարկերը սրտիս.  
Ճակտիցս հանկարծ մի կաթիլ ծորաց,  
Այսու խողտեց ու ընկավ մատիս...

Լռություն... հուզում... ըսպասումի դող.  
Քարացավ, ասես, տիեզերքն անձիր  
Կա՛մք, մարդու ձեռքով դու հողմե՛ր սանձող՝  
Սրտիս դեմ անգոր՝ գեթ մա՛տս սանձիր...

Զգում եմ դանդաղ եվ ինչպես մի նևտ  
Հայացքով արդեն մեխվում նշանին.  
Ա՛խ, երևեկ այսպես, իմ հայացքի հևտ  
Գնդակն էլ շիտակ մեխվեր այդ կետին...

Հանկարծ՝ կրակո՛ց... ասես մի զարկով  
Սիրտս դատարկվեց զարկերից բոլոր.  
Արդե՛ն... այսպես շո՛ւտ... ու դատարկ սրտով  
Իմ բախտին հյու՛ կանգնեցի մոլոր...

Հայացքով շարված՝ նայեցի հեռուն՝  
Մայրն էր ժպտում՝ մատը նշանին...  
Օ, մատն այդ՝ մնաց հար իմ հուշերում  
Ռբակս իմ բախտի ցուցիչն առաջին:

Հետո՛ պատերա՛զմ... մարտեր հրաշունչ  
Եվ հաղթանակի վարդեր իմ դարձին...

Զորանոցումն եմ, խաղաղ է իմ շուրջ,  
Մաքրում եմ սիրով հրացանը իմ:

## Հ Բ Ա Ն Ո Ր Ն Ե Ր

Դուք Հայրենիքիս սրտին եք ձուլված  
Իրոնզե անթիվ, անթի՛վ փողերով.  
Հողն իմ հաղթական ձեզնով է պատած  
Ինչպես արեվը՝ ոսկե շողերով:

Դուք Հայրենիքիս սրտին եք ձուլված,  
Նրա պես անհուն զիտեք փոթորկել.  
Երբ ցասամաք է լի՝ ցասամաք եք վառված,  
Երբ ցնծում է նա՝ ցնծո՛ւմ եք դուք էլ:

Երբ մուժն էր պատում երկիրը մեր թով,  
Լավում՝ ազաւովի կռիւնքն անհագ՝  
Մեզ ամպերն էիք պատռում ձեր բոցով,  
Չար ազաւախներին նետում ոտքի տակ:

Ու ամեն անգամ, երբ չար դելի պես  
Հորիզոնում սեւ ամպն էր թանձրանում՝  
Բարձրանում էին ձեր փողերն այնպես,  
Ինչպես օվկիանոսում հողմն է բարձրանում...

Ելնում էր հուժկու ալիքը ցասման,  
Ծառս էին լինում ձեր փողերն անթիվ.  
Թշնամու համար փորում գերեզման,  
Լույսը մեր փառքի՝ նետում աստղերին...

Իսկ արդ, երբ խաղաղ երկիրն է ծաղկում —  
Խաղաղ եք դուք էլ՝ պահակադիրքում...

ԵՐԳ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՎ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ  
ԼԱՊՏԵՐԻ ՄԵԱՍԻՆ

Շրջում եմ կրկին իմ հին բաղաբի լայն փողոցներում.  
Նույն լույսերն են վառ ծիծաղում անմար ու սիրտս գերում  
Ասես կռանում, բարձր սյուներից նայում են դեպ ցած,  
ձգնում են պատմել շարվեշար հուշեր, դրվագներ անցած.—  
Բայց նրանց շարքում կա մի հին լապտեր՝ ինձ մոտիկ այնպե՛ս,  
Նա իր սեփական պատմու թյունն ունի, որ անհայտ է ձեզ.

Քառասունմեկ թիվ, ամառ... օ՛ խոցված խնդության  
ամա՛ռ...

Ի՛նչ պայծառ էր բո վրանը կապույտ, ջինջ, լուսականար.  
Ու հանկարծ՝ որո՛տ... պատերա՛զմ, ավե՛ր... 22 հունիս,  
Անգամ խոտերում այս բոթը սողաց բանց թունոտ մի իժ...

Գիշերն էր իջնում սեվ շղարշի պես: Օգտվելով մութից  
Շտապում էինք պարտիզաններս դեպ անտառ ու կիրճ.  
Ես վազում էի. կանգ առա հանկարծ... փողոցի ծայրին  
Իրար նայեցինք ես եվ իմ ծանոթ լապտերը այն հին.—  
Անտեղի ժպտով լոկ մատնում էր նա մեր անցած ուղին,  
Ողողում լույսով դեպ անտառ տանող միակ ծառուղին...  
Ես դուրս բաշեցի նազանը թափով. որո՞տ էր, թե՞ ճիչ...  
Ասես կուրացավ հարազատ մի աչք, որ նայում էր ինձ...  
Է՛խ, չէ՞ որ այնտեղ, տարիներ առաջ, այն հին սյունի տակ  
Մարմին էր առել իմ միակ սիրո դաշինքն անխորտակ,  
Իսկ արդ, այնտեղի՛ց, այն սյունից վերել՝ բաց պատուհանից  
Աչերը նրա՝ որպես զույգ լապտեր՝ ճամփու դրին ինձ...

Այդ օրից, ահա՛, ձեռքիս վրեժի կայծակը հատու՛  
կո՛վում էի ես պարտիզանական խիզախ ջոկատում.  
Մինչ զտա մի օր հետքը հարազատ իմ զորամասի  
Միացա նրան, դարձա իսկական մի կարմիր ուզմիկ.

Նահանջ... օ՛, սակայն օր-ավուր անող կուռ բանակը մեր  
Ոչ թե նահանջում, այլ ասես սարով բարձրանում էր վեր,  
Ենձում էր վատահ, որ այն բարձունքից ահավոր ու սեգ՝  
Գահավիժեր ցած ել ահաբեկեր հորդաները սեվ...

Այդպիսով օրի՛ր, ամիսներ անցան ու որպես պատնեշ  
Կանգ առանք խրոխտ. թշնամին իր ողջ ուժերը վատնեց,  
Կանգ առավ ձեռված... Մենք գրոհ տվինք, նահանջեց նա ետ  
Ու արշավը մեր փոթորկեց ինչպես հորդահոս մի գետ...  
Շանթեցինք չարին ինչպես մրրիկն ու կայծակըն ամպից,  
Գարնան գետի պես սրբեցինք նրան մեր դարձի համբից.  
Ու մի օր, մի օր՝ որպես մրրկած ալիքն իններորդ՝  
Օ՛, իմ հայրենի բաղաբը մտանք շարքերով մեր հորդ...  
Մեր դեմ վագեցին մայրերը՝ գրկած մանուկ ու ծաղիկ,  
Մեզ ողջունեցին կարկաչներն անո՛ւշ, անկեղծ ծիծաղի,  
Բայց իմ ուղեղում հորդում էր մի միտք թափով հորձանուտ՝  
Ես փնտռում էի իմ ձեռքով մարած լապտերն այն ծանոթ...  
Ես փնտռում էի... ահա եվ գտա... օ՛, կույր աչքի պես  
Մի անգոր տենչով, տեսնելու տենչով շարժվում էր  
կարծես...

Եվ, ասես հրված մի աներեվույթ ձեռքով մոզական —  
Ես առաջ անցա...

— «Թույլ տվեր, խնդրեմ, ընկեր կապիտան...»

...  
Եվ երբ, վերջապես, այն լուսավառված սյունից իջա ցած՝  
Կանգ առա մի պահ, շնչեցի ազատ ու թեթեվացած, —  
Է՛խ, չէ՞ որ այդտեղ, տարիներ առաջ, այդ հին սյունի տակ  
Մարմին էր առել իմ միակ սիրո դաշինքն անխորտակ,  
Է՛խ, չէ՞ որ այդտեղ, այդ սյունից վերեվ—բաց  
պատուհանից

Աչերը նրա՛ որպես զույգ լապտեր կանչում էին ինձ,  
Է՛խ, չէ՞ որ, չէ՞ որ իմ ձեռքով վառված այդ մի լապտերում  
Զգում էր հոգիս իմ հաղթող երկրի հրեվանքը եռուն...

1945 թ.

## Ի Մ Զ Ա Յ Ն Ը

Իմ մայր - Հայրենի՛ք, դո՛ւ ես տվել ինձ թե՛ լեզու, թե՛ ձայն,  
Փայփայել սիրով կանչն իմ առաջին—գրկի մեջ բո լայն:

Հայրենի երկի՛նք, դո՛ւ ես իմ ձայնին պարգեվել թեվեր,  
Շանթերիդ հետքով որպես մի արծիվ իմ ձայնն է թեվել..

Հայրենի ծովե՛ր, դո՛ւք եք իմ ձայնին տվել կռվի հունչ,  
Պարգեվել նրան ձեր մրրիկների ու թմբ բոցաշունչ..

Ստեպանե՛ր, ձգված արեվածագից մինչեվ մայրամուտ,—  
Այդ դուք եք նրան տվել ձեր հոգու լայնութունը լուրթ...

Ժողովո՛ւրդ իմ վես, բո լույս տենչերից, խոհերից բո խոր,  
Քո պայքարներից իմաստ է առել իմ խոսքը մի օր:

Իսկ Դո՛ւ, Առաջնո՛րդ... իմ ձայնը Քեզնո՛վ երգ դարձավ  
հզոր,

Այդ խրոխտ երգով ես Քե՛զ եմ բերում իմ ձայնը այսօր..

1947. թ.

## ՀԱՂԹԱՆԱԿԻ ՀԱՅՆԼԻՆ

(Ձոն Ստալինյան Կոնստիտուցիային)

Առնում եմ ձեռքս զիրքն այս ոսկեբառ,  
Մեր կռվի՛, կյանքի՛, փառքի՛ հայելին.  
Վերից արեվն է փայլելում անբառ,  
Այստեղ բառերն են շողում ավելի:

Մեր կյանքն է ծփում ալիք առ ալիք  
Միլիոն ձեկերով՝ այս մի գրքի մեջ.  
Ասես թե անցյալ, ներկա ու գալիք  
Հաղթանակներն են ծփում էջ առ էջ:

Բայց ո՞վ է կերտել Օրենքն այս պայծառ,  
Ուր Մարդ անունն է հասնում աստղերին.  
Ո՞ւմ անգուգական աջն է հայրաբար  
Օղակել սիրով սրտերն ազգերի:

Ո՞ւմ միտքն է այստեղ նառագում անմար,  
Ո՞վ է ստեղծողն այս անմահ գրքի.—  
Նա՛ է, եղբայրների, Ստալինը մեր հայր,  
Նրա պատկերն է այստեղ թանկագին:

Իսկ զիրքն այս՝ դարձած օվկիան - հայելի՛  
Գրկել է շռայլ շողերը նրա  
Եվ բանի գնա այնքան ավելի  
Պիտի բարձրանա՛, պիտի հուրհրա՛...

## ԵՐԳ. ՀԱՂԹԱՆԱԿԻ

Հաղթանակը սրտիս դռնից այնպես շուրճ՝վ մտավ ներս՝  
Ասես խնդուն մեր բաղաբին Ստալինը եկավ տես...

Այնքան վարդեր բերեց իր հետ, այնքան երգեր բաղջրահունչ,  
Ասես բոլոր մայիսներից այս Մայիսին բերեց փունջ,

Հաղթանակը տուռ դարձած երկրիս հերկերն ակոսեց,  
Թառեց ամեն ծառի ճյուղի, դարձավ թռչնիկ ու խոսեց.

Առավ ճյուղեր, դալար շյուղեր գարուններից բովանդակ  
եվ հաղթական այս նոր գարնան գլխին դրեց կանաչ թագ...

Հաղթանակը դարձավ հեղեղ, չարի հողը ողողեց,  
Դարձավ մի փող՝ աշխարհով մեկ երկրիս փառքը տարփողեց,

Վեր խոյացավ որպես դալար, ազատարար մի կուռ ձեռք  
Ու Բիռլինի կրճբին խրեց դրոշը մեր արնաներկ...

Հաղթանակը հողմերի դեմ դարձավ պատնեշ անխորտակ,  
Մեծ Իլյիչի դամբանի մոտ դարձավ արթուն մի պահակ,

Դարձավ անձրեւ մարգարտաշիթ՝ ցողեց այգի, հերկ ու ցանք  
եվ լվացված դեմքին երկրիս կապեց կամար յոթներանգ...

Հաղթանակը սրտիս դռնից այնպես շուրճ՝վ մտավ ներս՝  
Ասես խնդուն մեր բաղաբին Ստալինը եկավ տես...

1945 թ.

# Տ Ա Ղ Յ Ն Ժ Ո Ւ Թ Յ Ա Ն

(Մայր քաղաքի ծնունդի)

Քոյո՞ր երգերն իմ երկրի  
Այսօր խինդով լուսաջինջ  
Կուզեն ծուլվել Կրեմլի  
Հայրենաթով զողանջին...

Ջրերն ամեն, գետ ու ծով  
Կուզեն ելնել ափերից  
Ու խառնվե՛լ կարկաչով  
Մայր-Վոլգայի ծափերին...

Քաղաք ու գյուղ հազած բյուր  
Դրոշ թեւեր արնավառ՝  
Կուզեն թռչե՛ր, գնալ հյուր  
Մայր քաղաքին հրավառ...

Ու ահն-աստղերն առկայծող՝  
Մով կամարից երկնքի  
Կուզեն իջնել որպես ցող  
Վարդ-աստղերին Կրեմլի...

Մոսկվան կուրծքն է մայր երկրի՝  
Նա ե՛վ կյանք է տալիս մեզ,  
Ե՛վ թշնամու նենգ սրի  
Առաջ ելնում սարի պես.

Ու ամեն սիրտ՝ մարդկության  
Բախտի երգը իր շուրթին՝  
Կուզե փարվել հավիտյան  
Կյանքի աղբյուր մեծ կրծքին.

Մոսկվան մեզնով է անպարտ  
Եվ Ստալինով մեր անգին,  
Մենք Մոսկվայով ենք հպարտ  
Ու Քեզանո՛վ — մեծ Ստալին՝

## ՏԱՐԵՄՈՒՏԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Մայր քաղաքում ձմեռ է արդ,  
Անուշ գիշեր տարեմուտի.  
Չյունն է իջնում, նստում բարդ-բարդ,  
Ինչպես արծաթը հեքիաթի...

Իջնում է ձյունն առա՛տ, լուսե՛ր դ,  
Ծփում որպես արծաթե բող.  
Երկինքն ասես դարձել է երգ՝  
Առատության գալն ավետող:

Ու կրեմլի աշտարակից  
Թռթռալով պաղ-պաղ օդում՝  
Թե՛վ է առնում անո՛ւշ, թովի՛չ  
Կես գիշերվա զանգը հորդուն:

Վերջին զարկն էլ մարեց հանդարտ:  
Նոր տարին է ելնում արդեն.  
Վառվեց երկինքն հրթիռազարդ,  
Բացեց անթիվ գույն-գույն վարդեր:

Եվ բարձրանիստ կրեմլի շուրջ,  
Ինչպես հսկա տոնածառի—  
Մեծ քաղաքի փոթորկաշունչ  
Կյանքն է խինդով հորձանք տալի...

Լույս է առնում մութը ձմռան...  
Չէ՞ որ այնտեղ, այն բարձունքից  
Լուսամուտն է վառվում նրա՝  
Երկրիս հառած հայացքն անբիծ:

Ոսկեգօծված լույսով այդ ծով  
Փաթիլներն են խինդով մաղում.  
Ո՞վ է փափուկ իր մատներով  
Լուսամուտն այդ զգուշ բախում.

— Ջան, ընկերնե՛ր, լցնենք զինին,  
Խմենք հյուրի կենացը ջինջ,—  
— Նոր տարին է Առաջնորդին  
Տալիս ողջույնն իր առաջին...

1947 թ.

## Բ Ե Ր Ք Ի Է Ր Գ Ը

էս ի՛նչ ուրախ օր է բացվել՝ ջրերի պես կարկաչուն  
Կուլի դաշտից հերոսների ծով շարքերն են գալիս տուն,  
Հայրենական հուր արտերի հնձվորներն են գալիս տուն,  
Ճամբա՛ տվեր... նանը գրկի պարտքահատույց իր որդուն..

Ճամբա՛ տվեր, ճամբա՛ տվեր հերոսածին իր նանին,  
Աչքին արծաթ ցողն է շողում, ձեռքին՝ արծաթ գերանդին.—  
—Ս՛ո, —ասում է,—կտրի՛ն բալա, շարունակիր գործդ վես,  
էն, ինչ տեսար՝ տեսի՛լք էր սեպ, մատա՛ղ լինի նանը քեզ..

Ճամբա՛ տվեր... Թո՛ղ հերոսը՝ սովոր հողմին ու շանթին՝  
Հայրենական խաղաղ արտում կրկին շարժի գերանդին,  
Թո՛ղ հաղթական դրոշի պես ոսկի բերքը տանի տուն,  
Մոր իլիկի բզզոցի տակ անո՛ւշ-անո՛ւշ մտնի քուն...

էս ի՛նչ ուրախ օր է բացվել՝ ջրերի պես կարկաչուն  
Կուլի դաշտից, ցորնի արտից ոսկի բե՛րքն է գալիս տուն...

1945 թ.

## Ե Ր Գ Կ Ա Ռ Ո Ւ Յ Ո Ղ Ի

Հազար մուրհների հզոր համերգում  
Ձնգում է զվարթ երգը կառուցման...  
Ձնգացե՛ք, մուրհնե՛ր, իմ սիրտն է երգում,  
Ձնգացե՛ք, բարե՛ր՝ ծայն տվեք նրան...

Այն օրերն անցան, երբ որդուս համար  
ես բանտ եմ շինել ձեռքերով դողդոջ.  
Փշրե՛լ ենք վաղուց բանտի դուռը բար  
Ու բացել բախտի դուռը ոսկեգօծ.

Այն օրից որքա՛ն շենքեր են անել  
Զավակներիս պես՝ իմ կուռ ձեռքի տակ.  
Զավակներիս հետ մի-մի լսո դարձել  
Ու թշնամու դեմ ելել անխորտակ:

Ես նրանց ամեն, ամե՛ն բարի հետ  
Քո սերն եմ կապել, Հայրենի՛ք իմ վեա  
Եվ դրա համար կապված են հավետ  
Այս բարերը կուռ ե՛վ իրար, ե՛վ քեզ...

Իսկ արդ՝ հաղթության ցնծությամբ արբած  
Կերտում եմ չքնաղ այս շենքը մարմար.  
Տեսնում եմ ինչպես ծխածան կապած  
Ժպտում է նրան մեր զալիքն անմար.

Ամեն հարկի հետ բարձրանում եմ վեր,  
Ձինջ հեռուների թովչությամբ եմ լի  
Ու սիրտս առած արծվի թեվեր  
Ճախրո՛ւմ է դեպի աստղը Կրեմլի.

.....  
Հազար մուրհների հզոր համերգում  
Ձնգում է զվարթ երգը կառուցման.  
Ձնգացե՛ք, մուրհնե՛ր, իմ սիրտն է երգում,  
Ձնգացե՛ք, բարե՛ր, ծայն տվեք նրան...

1947 թ.

## ՓԻՋԿՈՒՆՈՒՐԱՅԻՆ ՔԱՅԼԵՐԳ

Գալի՛ս ենք, հորդո՛ւմ ենք, զալի՛ս ենք,  
Մենք կյանք ենք, բերկրանք ենք բերում.  
Ստալինյան հաղթական դարից ենք,  
Մենք ջանք ենք, հրեմվանք ենք եռուն:

Գարուն է... սարերը ծաղկե՛լ են,  
Ջնգում են ջրերը հոսող.  
Տե՛ս, կարմիր արեմն էլ ծագել է,  
Փռել է շողերը բոսոր:

Օ, զարնան առաջին որոտը  
Հտո՞ւմ եք՝ հայթո՞ւմ է կայտառ.  
Երկինքն է երգում իր կարոտը,  
Մեզ պես նա ուզում է խայտալ:

Տեսնո՞ւմ ես, ընկե՛ր իմ, ամպերը  
Կուվում են եվ հուրն է ծնվում,—  
Այդպես են ծնվել մեր շարքերը,  
Կամքը մեր՝ պայքարն է սնում:

Ծնել են բեզ հուրն ու հորձանքը,  
Կոփի՛ր բեզ հրում ու ջրում,—  
Այդպե՛ս է ծնվել վառ այս կյանքը,  
Այդպե՛ս են պողպատը կռում:

Ու թե որ ուղեղդ շարժում ես՝  
Մարզիք եվ մարմինդ, մարզի՛ր,  
Լնձներն են, ջրերն են կանչում բեզ,  
Դե՛, կուրծքդ արփուն դու պարզիր:

Գալի՛ս ենք, հորդո՛ւմ ենք, զալի՛ս ենք,  
Մենք կյանք ենք, բերկրանք ենք բերում,  
Ստալինյան հաղթական դարից ենք,  
Մենք ջանք ենք, հրեմվա՛նք ենք եռուն...



## Դ Ե Պ Ի Ա Յ Գ Ա Ր Ա Յ

(Հայրենադարձներին)

Խոյ Ատլանտիկը չի խաղաղում,  
Ջրերն ուռչում են, ոռնում անսանձ.  
Մինչ արեվելքն է հրավառում  
Խաղաղածո՛ւնի մի ալ այգաբաց:

Ճեղքելով ջուրը, մրրկաշունչ  
«Հաղթանակ» նավն է սուրում առաջ.  
Հայրենի՛ ձափն է նրան բաշում,  
Հայրենի կ՛րգը բաղցրաշառաց:

Շառագունե՛լ են արփու շողից  
Նավի կողերը՝ այտերի պես.  
Դեմքերի պես այն վառ, անթախիժ,  
Որ այս նավից արդ ժպտում են մեզ:

Ճողփում է ջուրը ու շիթ առ շիթ  
Ծորում է նավի կողերով ցած.  
Ասես լալի՛ս է ցնծությունից  
Նավը՝ անհուն մի խինդով բարձած . .

Թե վի՛շտն է, վի՛շտը պանդխտության  
Հայի ծիծաղը դարեր բանտած,  
Որ հեղեղել է նավ ու օվկիան  
Արդ ցնծության լույս արցունք դարձած ..

Դե՛, լուսաշող այդ արցունքներով  
Լվացեր սիրտը ձեր, եղբայրներ,  
Որ նոր խինդով մի, երգ ու ծափով  
Մտներ ձեր տունը՝ երկիրը մեր.

Խոյ Ատլանտիկը չի խաղաղում,  
Ջրերն ուռչում են, ոռնո՛ւմ անսանձ.  
Մինչ արեվելքն է հրավառում  
Խաղաղածո՛ւնի մի ալ այգաբաց:

## Վ Ա Փ Ա Յ Ի Ն

Ղազբեզի կուրծքն է քեզ սեղան դարձել  
 Ու կրված որպես մի ամպ հրածին՝  
 Կայծակե գրչով երգերդ բոցե  
 Փորել ես լեռան մարմարե կրծքին...

Հսկաների հետ ու նրանց շնչով  
 Խարույկ ես վառել ամպերի տակին  
 Ու յոթն ունկանի հսկա պղնձով  
 Մի ամբողջ կխտար դրել կրակին...

Աղբյուրների հետ ժիր ու աներկյուղ,  
 Որպես լեռնային մի անտես ոգի  
 Իջել ես սարից, մտել շեն ու գյուղ  
 Ու կանգնել չարքաշ հողվորի կողքին...

Լսել ես սերմի շրջունը հողում,  
 Զհնձած արտի բողոքը արդար.  
 Կնճռոտված հողի ամեն մի տողում  
 Փործել ես երկրիդ խոհերը կարդալ...

Բայց եկել է հենց սեւ դեւը վայրագ՝  
 Դո՛ւ, ինչպես արծիվ սարերից թռած—  
 Հողմին հակառակ թռել ես արագ  
 Եվ սուրն է դարձել քո թեւը սրած...

Օ՛, այժմ էլ, ահա՛, կանգնած էս իմ դեմ,  
 Դաշույնիդ կոթին կուռ աջդ հենած.  
 Նայում եմ ես քեզ եվ արդ չգիտեմ՝  
 Այդ դո՞ւ ես, Վաժա՛, թե՞ ոգին վրաց...

Եվ շուրջդ, որպես անբնական արծիվներ—  
 Լեռներն են իրար քո հույզով կանչում,  
 Ու բա՛րձր, բա՛րձր, լեռներից էլ վեր  
 Ըմբոստ վրացու երգն է ղողանջում...

1943 թ.

## ԲՈՂԵՎԻԿՑԱՆ ՄԱՐՈՒԼԻՆ

Ինչպես զուլալ ջրհորից  
Ջուրը հասնի ծարավին՝  
Ընդհատակից բո գյուլթիչ  
Կանչը լցվեց մեր հոգին:

Մրրկեցիր ապա դու  
Դրոշների ծովի մեջ,  
Մեզ հետ, սրով բո հատու  
Բացիր բախտի այգը մեծ:

Եվ Սովետի ծիծաղկոտ  
Այգեստանում լուսաթով՝  
Բյուր գետերով լցված հորդ  
Դարձար անծայր լույսի ծով:

Մարտի ժամին բո անթիվ  
Թերթերի մեջ պարուրում՝  
Տանում էիր նակատին  
Բողբեվիկյան խոսքը—ուումբ:

Դե՛, ձեռքերում մեր անթիվ  
Դարձած շեփոր ոսկեզօծ՝  
Տա՛ր հաղթության սեղանին  
Արեվ—մարդու խոսքը բոց...

1945 թ.

## Մ Ա Յ Ի Ս Մ Ե Կ Յ Ա Ն

Բարձրանում է կրկին ամիսների երթում  
Մայիսը՝ ալ դրո՛շ... հորդում փոթորկալից,  
Հանց ուազմիկի շուրթին հրավառվող երդում՝  
Առաջնորդի անմար, հո՛ւր անունը տալիս...

Ոսկե ամպն է հայթում՝ գարնան սալլուտ որպես,  
Ելնում ցնծուն արփին՝ հաղթանակի շեփոք.—  
Իմ հայրենի մայի՛ս, դու շուայլ ես մոր պես,  
Ինչպես հողն իմ՝ բեղուն, ժողովուրդն իմ՝ հզոր...

Այդ քե՛զ համար թափվեց անգին արյունը մեր  
Հոկտեմբերյան ծյունին ու Կերչի մոտ՝ երեկ...  
Քո երջանիկ լույսով քանի՛-քանի՛ ծմեռ  
Դեռ կհագնեն գարուն՝ հանց գիշերը՝ ցերեկ...

Այս մայիսի համար, երբ ծաղիկն էլ չնչին  
Իմ Հայրենի հողում ունի հանդեսն իր ջերմ—  
Հնում քանի՛ մանկան ձեռքի ծաղկեփնջին  
Կարոտանքի այրող, բորբ արցունքն է իջել...

Իսկ արդ... ելնում է հաղթ՝ ամիսների երթում  
Մայիսը՝ ալ դրո՛շ... հորդում փոթորկալից,  
Հանց ուազմիկի շուրթին հրավառվող երդում՝  
Առաջնորդի անմար, հո՛ւր անունը տալիս...

1947 թ.

## Դ Ո Ւ Ր Յ Ա Ն Ի    Հ Ե Տ

Օ՛, կարոտի ի՛նչ խոր հրաբուխ է վառել  
 Անգամ բառը հետին՝ այս սեվակազմ գրքում,  
 Ի՛նչ կրքով են լուսե էջերն իրար փարել  
 Անըջելով ներմակ՝ ժանտ խավարի գրկում...


Դուք զիտեի՞ք նրան, այն երազուն երգչին,—  
 Իր տենչերն էլ այսպես զգվում էին իրար—  
 Աստղերի պես ընկնող՝ թափում հուրը վերջին  
 Եվ լուռ մարում մութի հորձանքներում վարար...

Բայց խավարի անհուն, սրտակեղեր մութում  
 Չէ՛ր դալկանում լուսե հետքը նրանց վազքի  
 Եվ աստղազարդ երկնի ջինջ երազն էր հյուսվում  
 Մի երկրային հեքիաթ այգաբացի մասին...

Սրդ՝ նստած եմ խաղաղ. շուրջս խնդում ու լույս,  
 Հայացքիս դեմ ցնորք այս գրքույկը կրկին  
 Եվ աչքերս, որպես աստղեր խավարասույզ,  
 Թափառում են մութում այս սեվազգեստ գրքի...

Կպատուեի՛, պոե՛տ, սեվ շապիկն այս՝ կրքով,  
 Կհազցնեի գրքիդ մի ոսկելույս պսակ,—  
 Իայց ո՛չ... թո՛ղ դու մնաս լոկ սեվակազմ գրքով,  
 Որ մենք բո սեվ դարի դառնությունն ըզգանք...

1940 թ.



## Մ Ա Յ Ա Թ - Ն Ո Վ Ա

Դո՛ւ, որ երգով կյանքին տվիր ռանգ ու ռուբար,  
Սայաթ-Նովա,
 կյանքը թողած՝ ո՞նց սիրեցիր վանքեր ու քար,  
Սայաթ-Նովա.
 Մեջլիսների բլբուլն էիր, վարդի թողած էդ ո՞ւր թռար,  
 Ի՞նչ ունեիր աստրծու հետ—խալխի նորձա՛ր Սայաթ-Նովա...

էդ սեւ բուրձով զո՛ւր սեւացար. վանքերումըն բան չունեիր  
 Ազռափների սեւ մեջլիսում դու ոսկե փրնջան չունեիր.  
 է՛խ, հոգնեցի՛ր, դու էլ ընկար... էլ կռվելու ջան չունեիր.  
 Դո՛ւ, վանքերում միակ աստված—հոգու նախշքար,  
Սայաթ-Նովա:

Շնչում ես, կա՛ս իմ սրտի մեջ՝ նոր սրտի պես,  
Սայաթ-Նովա,
 Լեռն էլ զխտի, որ մեծ էիր ու կաս էդպես, Սայաթ-Նովա  
 Սեւ դարն անցավ. քեզ արժանի դարումն եմ, տե՛ս,  
Սայաթ-Նովա.
 Մեծ է դարըս, բայց ի՛նչ անեմ, որ փոքր եմ ե՛ս,  
Սայաթ-Նովա...

1946 թ.

## ԵՐԳՅԻ ՓԱՌԻՔԸ

Քարվանն առած, պանդուխտ դառած,  
Ուղտերի հետ օրոր-շորոր,  
Մրտում հազար ախ ու հառաչ՝  
Գնում էր նա քայլամուրր.  
Իր հայրենի դաշտ ու սարից  
Փախչում էր նա հեռո՛ւ, հեռո՛ւ,  
Եվ լոկ մրմուռ, եվ լոկ թախիծ,  
Լոկ կարոտ կար իր խոհերում...  
Քայլում էր նա դեպի արեւ.  
Քայց երբ հոգնեց ու ետ նայեց՝  
Մի լույս ցոլաց հայոց սարեն  
Ու արեւից վառ հմայեց...  
Էն ուղտերը ամպեր դարձան.  
Հեծավ նա հուր ձին Մհերի  
Եվ քրտնաթոր երբ տուն դարձավ՝  
Կանչեց—

— Մա՛յր իմ,

Վերածնված իմ Շիրակի դաշտեր աբձակ —  
Ահա՛, բեկված սիրտս բերի...

Եվ Հայրենի լանջերը պերճ  
Առան նրան լայն գրկի մեջ,  
Ուր խոնջացած, նա, արդարեւ  
Գտավ եվ տուն, եվ կյանք, արեւ..  
Ու իր հոգու զանձերն անհուն,  
Տաղերն անբիծ, պայծառանուն,  
Խոհերը խոր, հավերժական  
Հայոց անմար երգի արքան՝  
Հանց մայիսյան երկինքն առատ  
Ցողեց երկրին իր ծաղկազարդ.  
Իսկ Հայրենիքն անուշ մոր պես  
Դրկեց նրան ու արեւիկեզ,  
Ու հողմակոծ կրծքին նրա՝  
Հենց ամոքված վերքի վրա  
Վառեց անմար փառքի նշան՝  
Մեծ Լենինի շքանշան...

1945 թ.

## Գ Ա Ր Դ Ե Վ

Ծաղիկների պես իմ կրծքին հաճախ  
կտեսներ հպված մի բանի մանուկ.  
Ես մանուկներին սիրում եմ անչափ,  
Ու նրա՛նք են լոկ այդ բանն իմանում:

Եվ միշտ՝ առօրյա ջանքից խոնջացած,  
Երբ ծանոթ այգով ես տուն եմ գալիս՝  
Նրա՛նք են, որ լույս թռչնիկներ դառած  
Իմ գիրկն են թռչում, ջերմ համբույր տալիս...

Իսկ այսօր, ասես նրանցից խոռով,  
Քաշվելով այգու մի ծածուկ անկյուն՝  
Հոգիս մրրկած հուլյգների հրով  
Իմ երգերն էի հորինում թաքուն...

Եվ ոչ մի մանուկ, ոչ մի զանգրահեր  
Իմ մոտով վազել անգամ չփորձեց...  
Ասես ողջ այգին իր շունչը պահել՝  
Ըսպասում էր լուռ՝ երկունքի մի մեծ...

Իսկ երբ ավարտած իմ տողը վերջին  
Գլուխս հոգնած ես բարձրացրի՝  
Ժպտում էր այգին ու պարզում էր ինձ՝  
Կենդանի մի փունջ՝ վառ մանուկների...

Այդ նրա՛նք էին, որ ծաղկանց միջից  
Թաքուն՝ լրջախոհ նայում էին ինձ...

1940 թ.

## ԳՐԱԸԱՐ ՎԱՐՊԵՏԻՆ

Երբ ներմակաթեվ կարապների պես  
Թերթերն են թռչում քաղաքից-քաղաք, —  
Իմ ծերուկ վարպետ, ես հիշում եմ քեզ,  
Քո մատները վարժ, ժպիտդ խաղաղ:

Ինչպես հաղթության հավատն իմ սրտից,  
Որ սրով անզամ ուժ չարին պոկել՝  
Դու չե՛ս հեռացել սիրած դազգահից,  
Փորձության ժամին դիրքդ չե՛ս լքել:

Հավատով անհուն կառչել ես նրան,  
Իր սրտի զարկով քո կամքը չափել.  
Նրա հետ մեկտեղ կռվել քրտնաջան,  
Նրա հետ մեկտեղ հաղթությամբ արբել...

Դու ներմակ թերթի լուսեղեն զրկում  
Տառերն ես ցանել հանց ոսկի սերմեր,  
Որ բույս առաջ՝ աչքերով անբուն  
Երկիրը կարդա ցնծության լուրեր:

Գործում ես խաղաղ... ասես թե ոչինչ  
Զի փոխվել կյանքում, չի՛ եղել կռիվ.  
Լոկ մեքենայիդ ուրախ զնգոցից  
Թռչում է սիրտդ որպես թափանիվ:

Յնցվում է հանկարծ անկյունը շուրթիդ,  
Աչքիդ մեջ գոհար արցունքն է շողում.  
Մոտենում եմ լուռ... նայում մատներիդ՝  
Վարպետ... Ստալինի անունն ես շարում...

Դե՛, շարի՛ր արագ դու անունն այդ վես,  
Թերթերին հանձնիր, թո՛ղ նրանք շար-շար  
Բյուր ներմակաթեվ կարապների պես  
Անունն այդ տաննն աշխարհից - աշխարհ...

Փ Ա Ռ Ք

Լեռներ՝, պայքարող տարերքից սերած.  
Ձեզ շա՛տ են ձոնել ներբողներ անգին.  
Դե՛, թող իմ տաղն էլ գովերգի նրանց՝  
Որ փառքով ելան ձեր հպարտ զահին:

Սհա ձեր կրծքում ոտքերը խրած,  
Գլուխը դրած փեշին ամպերի,  
Կանգնած են՝ ջլուտ թեվերը պրկած  
Հսկա սյուները քարձրավտաների...

Օ՛, երկնասլաց սյուներն այդ հիմա՝  
Բյուր երկաթամատ բազուկների պես  
Կորզել են ոսկե արեվն աննման  
Ու խինդո՛վ, խաղո՛վ ուղարկում են մեզ...

Իսկ լարերը ձիգ՝ բնարներ կապած  
Ձնգո՛ւմ են լույսի թափից անհամբեր...  
Լեռներ՝, այդ երգը ձոնված է նրանց,  
Որ պողպատաքայլ միշտ ելնում են վեր...

1947 թ.

## ԳՈՐԺԱՐԱՆՆԵՐ

Ես ձե՛զ եմ երգում, հաղթ գործարաններ, զալիքի սյունե՛ր,  
Ձեր մեջ է վառվում ներկան մեր հպարտ, ապագան անմեռ,  
Դո՛ւր եք, որ անվերջ բարձրանաք պիտի, լեռնանա՛ք, անե՛ք,  
Ու ձեզ կյանք տվող կուռ բազուկներով աստղեր նվաճեք...

Ամեն, ամեն ինչ, որին իմ հոգին ձգտում, չէր հասնում՝  
Լույս, անմահություն, սլացում ու խոհ՝ ձեր մեջ եմ  
տեսնում.

Կանցնեն տարիներ, դանդաղ կմարի կրակն աչքերիս,  
Բայց աչքերը ձեր՝ հուրերով լցված՝ կվառեն հոգիս...

Ո՛չ, նման չե՛ք դուք գործարաններին այն զանազան սեվ,  
Որոնցում կարիքն այրող բողոքի իր երգն էր հյուսել...  
Ուր, ինչպես մի սարդ՝ իր երկաթաթել ոստայնը կապած՝  
Մարդն իր նմանի արյունն էր ծծում չարությամբ արբած...

Ձեր շուրջը գանգուր այգիներ փարթամ, պուրակներ կանաչ,  
Լույս շատրվաններ՝ ձեր մեջքին գույն-գույն գոտիներ  
կապած.

Ասես թե գուգվել, ելել եք խնդուն մայիսյան երթի...  
Ջա՛ն, ազատ մարդու բազուկները հաղթ ինչե՛ր չեն  
կերտի...

Ձնգո՛ւմ եք. ձեր հաղթ պատերն են դողում անափ  
եռանդից.

Այստեղ՝ պողպատե ջղերը պրկած՝ քարից, երկաթից  
Մարդը լեռնաչափ սրտե՛ր է կերտել հավատով անմար,  
Ու սրտերն այդ հար բաբախե՛ն պիտի ի՛ր բախտի համար...

Եվ ուր էլ լինեմ՝ դո՛ւր եք լեռնալանջ ծառանում իմ շուրջ,  
Վառ սիրտս լցնում շառաչուն դարիս երգով բոցաշունչ.  
Հե՛յ, գործարաններ, ձեզ նման, ահա՛, հույզերով հրկեզ՝  
Ձեզ կյանք պարգևվող բանակների հետ բարձրանում եմ  
ես...

1948 թ.

## ԽՈՍՔ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ

Լի է կուրծքս կրկին մրրկահույզ տաղով,  
Ազատութեան հողում զնգա՛, երգ իմ ազատ.  
Ստալինյան արիւտ հանանջների խաղով  
Շողա՛, երկկ'ր իմ պերճ՝ երանգներով հազար:  
Դու շառաչի՛ր այսօր, երբ տագնապող հեղբից  
Գալարվում են մեր շուրջ չար հողմեր ու սամում.  
Մինչ կանգնած են հաստատ՝ ժողովուրդներն երկրիս  
Որպես ժայռեր անդող՝ իրար գրկած ամուր:  
Ես այսօ՛ր եմ երգում,

Քառասունյոթ թվին.

Երբ հաղթութեան դեռ թարմ, լույս վարդերի վրա  
Թույն են ուզում ցողել նրանք, որ խոսք տվին  
Զբորբորել կռվի, նոր աղետի կրակ.  
Նրանք, որ պարզ մարդկանց սուրբ արյունով անեղծ  
Կուզեն լվալ բորոտ, սեվ մարմիններն իրենց...  
Այսօ՛ր.

Այն վեհ օրից

Երկու տարի հետո.

Երբ մերկութեամբ արդեն մոլեգնում են հերթով  
Զերջիլները ամեն, Դալլեսները բոլոր,  
Որոնց ծախու հոգին դիմանում էր զոռով...  
Տե՛ս, ոռն՛ւմ են վայրի. աղերսում են նրանք  
Ատոմային ռումբից՝ հաղթանակի փշրանք,

Բայց օ', չկա' մի ռումբ այն սեւ գործին հարմար,  
Որ զերեզման փորի շոկտեմբերի համար...

Ձո՛ւր են ունում նրանք.

Ո՞ւմ, ո՞ւմ պիտի խաբեն,

Նրա՞նց, որոնք ծովից հորդ արյուն են թափել,

Նրա՞նց, որոնց համար տինզերքում անծիր

Ձկա' մի այլ ոտխ' պատերազմից զազիր...

Ես այսօ՛ր եմ երգում.

Եվ իմ երգը արդար

Ձոնում եմ լոկ նրա՞նց, նրա՞նց, որոնք անմար

Իրենց սիրտը կարմիր՝ Դանկոյի պես անահ

Պարզել են վեր՝ որպես կարմիր լույսի մի ջահ...

Նրա՞նց, որոնց երբե՛ք չեն ստիպի ուլժով՝

Խղճի լույսը մարել դոլլարների լույսով...

Դե՛, փոթորկի՛ր, իմ սի՛րտ արդարության տաղով,

Ազատության հողում զնգա՛, ե՛րգ իմ ազատ.

Ստալինյան արվու հահանչների խաղով

Շողա՛, երկի՛ր իմ պերճ՝ երանգներով հազար...

1947 թ.

## Մ Ո Ր Ս    Հ Ե Տ

Հիշում եմ կրկին  
Առավոտն այն վեա՛  
Երբ մորս անգին  
Դիմեցի այսպես.—

—Ասա՛, մայրի՛կ ջան,  
Զէ՞ որ մեծ եմ ես,  
Դպրոցի համբան  
Գիտեմ առանց բեզ:

Քեզ համար մեր տանն  
Անվերջ բան ու գործ.  
Ես մենակ կերթամ  
Այսօրից դպրոց...

Մայրիկն ինձ գրկեց,  
Ասաց,—ի՛մ թռչնակ,  
Ճամբադ չկորցնես,  
Զընկնես բանի տակ...

— Անհո՞գ կաց, մայրի՛կ...  
Ու գրբերն առած՝  
Քայլերով արի  
Ես անցա առաջ:

Շողում էր պայծառ  
Ճամբան աչքիս դեմ,  
Սակայն, երբ անցա  
Մեր փողոցն արդեն—

Նայեցի մեկ ետ...  
Տեսնեմ՝ անկյունից  
Մայրս ակնդետ  
Հետեւում է ինձ...

Ու մորս պայծառ,  
Ձերմ հայացքի տակ  
Քայլերս դարձան  
Ավելի վստահ...

. . . . .

Քայլում եմ նորից  
Կյանքի համբերով,  
Հայրենի՛քն է ինձ  
Հետեւում սիրով...

1947 թ.



## Ք Ա Ռ Յ Ա Կ Ն Ե Ր

1. Էն հին սայլի տեղ՝ ճոճուան, ավեր,  
Սուրում են այսօր գնացքներ, Կավեր,  
Բայց, է՛հ, Պառնասի բարոտ վերելքով  
Մարդը միշտ ոտքո՛վ պիտի գնա վեր...
  
2. (Նմանութունն)  
Մտերմութունը թելի է նման.  
Ու թե որ հանկարծ դու թելն այդ կտրես՝  
Երբե՛ք չես կապի էլ առաջվա պես՝  
Միշտ էլ մի հանգույց կգտնես վրան:
  
3. Պեպոյի նման՝ բարաթը ձեռին  
Կանգնած է բարին միշտ չարի առաջ.  
Դողում է չարը, ժպտում է բարին՝  
Հայացքը պայծառ՝ գալիքին հառած:
  
4. Տնակը Գորիում  
Մի օր վարպետ մի չնչին՝ քրտինք ցողեց բարերին  
Ու կանգնելով մի խրճիթ՝ նվեր թողեց դարերին.  
Շատ պալատներ այն օրից հուշ են դարձել ու մարել,  
Մինչ կանգնած է խրճիթն այն՝ հազած զրահ մարմարե:
  
5. Դեռ պատանի՝ փնտռում էի, փնտռում ջանքով  
մի տոկուն  
Անեզրության գաղտնիքը հին՝ լարած ուղեղն  
իմ խոկուն...  
Անցան տարիք, եվ ես մի օր անբուն փնտռածն իմ գտա  
Քո հանճարում անեզրական եվ անսահմա՛ն Քո հոգում:

6. Դու կմարես, պայծառ արեւ, ժամանակի զոռ  
 զարկերին չես դիմանա.  
 Քանզի լույսդ ո՞ւմ ես տալիս եվ կամ ի՞նչու՝ երբե՛ք,  
 երբե՛ք չես իմանա.  
 Իսկ Նա՛, իսկ Նա՛ հանճարը մեր միշտ կշողա ավելի  
 վառ, ավելի ջինջ,  
 Քանզի համայն երկրազնդի եվ մարդկության սերն է  
 վառել սրտի միջին:
7. Միշտ, ո՞վ արեւ, քեզ նայելիս մի վառ միտք է ինձ  
 փայփայում,—  
 — Ո՞վ իմանա՛ հենց այս պահին Նա էլ սիրով քեզ է  
 նայում  
 եվ հայացքով այնքա՛ն հստակ՝ քո լույսերին ..  
 ձուլված ի մի  
 Հեքիաթական քո հայելում սիրով ի՛նձ է ժպտում հիմի:
8. Ո՞վ արեգակ, հին բարեկամ երկրազնդի եվ մարդու,  
 Հեռվում լուսե թագ ես հյուսել երջանկության  
 համար դու.  
 Բայց քո հստակ լույսերի տակ սրտերն այնժամ  
 բերկրացին,  
 Երբ հառազեց հանանչագեղ մեր Սրեվը երկրածին...

Թ Ի Թ Ե Ռ

( Լ Ե Գ Ե Ն Դ )

Կա մի հին զրույց,  
Զրույց ոսկեղեն,  
Թե թիթեռը՝ լույս  
Ծաղիկ է եղել:

Մով լեռան լանջին  
Բացվել է նա էլ,  
Հիացրով մի ջինջ  
Սշխարհին նայել

Եվ ծփուն ծաղկանց  
Գրկում անուշիկ —  
Խնդությամբ անանց  
Բուրե՛լ է հուշիկ...

Բայց մի պաղ գիշեր  
Քամին ցրտաշունչ  
Փչե՛լ է, բշե՛լ  
Ծաղկունքը նախշուն...

Ու նրա բուրյան  
Շքեղ պսակից՝  
Երկու թերթ միայն  
Թողել իրար կից...

Եվ իրար գրկում,  
Վշտից դալկահար՝  
Թերթերը երկու  
Խորհել են ահա. —

— Ո՞ւր կորան, ա՛խ, ո՞ւր  
Քույրերը մեր ջինջ.  
Տխո՛ւր է, տխո՛ւր  
Վայրկյանը վերջին...

Տխո՛ւր է կորչել  
Աշխարհից անհետ,  
Ա՛խ, կուզենք թռչե՛լ,  
Թռչե՛լ իրար հետ...

Թռչե՛լ... ու հստակ  
Կապույտից գերիջ  
Աշխարհին վստահ  
Մեկ նայե՛լ վերից...

Ձեզ նայել, լեռներ,  
Կարոտով անշեջ  
Եվ հպարտ մեռնել  
Ազատության մեջ...

Լսել է բարի  
Հովիկը նրանց  
Ու լանջով սարի՛  
Եկել է թռած.

Եկե՛լ, խնդալով  
Թերթերին փարել,  
Ջերմ համբույր տալով  
Պոկել ու տարե՛լ...

Եվ իրար փարած  
Երկու ծաղկի թեր՝  
Հովից թե՛վ առած  
Դարձել են թիթեռ...

1939 թ.

# Ե Ղ Ե Վ Ն Ի

(Լ Ե Ղ Ե Ն Ղ)

Ասում են, իբրեւի, տարիներ առաջ՝  
 Մի որբ աղջիկ էր եղեվին կանաչ,  
 Մի սիրուն աղջիկ, մագերով արծակ,  
 Որ հետո փարթամ, խիտ նյուղեր դարձան:  
 Ձմեռ էր. բուքն էր զազազել դրսում.  
 Աղջիկը անտուն դողում էր, մրսում,  
 Լալով, մուրալով ու ձեռք ծոցում  
 Քայլում էր բոքիկ՝ սառած փողոցում:  
 Ահա մութն ընկավ, քամին սաստկացավ,  
 Ճնհողուկն էլ դողաց, ընում թագ կացավ,  
 Միայն որբուկը սարսուռ ձյուններում  
 Կանգնած էր մենակ, մարդկանցից հեռու...  
 Երկինքը մթնած մաղում էր, մաղում,  
 Մագերից, այտից սառույցներ կախում...  
 Ու երբ հասկացավ՝ սառչում է արդեն—  
 Մի խոր ա՛խ քաշեց, աչերը թարթեց  
 Եվ այսպես տենչաց կարոտով պայծառ—  
 — «Ա՛խ, երնեկ ե՛ս էլ դառնայի մի ծառ...»  
 Ոչ շոր ուզեի, ոչ ուտել-խամել,  
 Ապրեի կանաչ՝ միշտ, ամառ-ձմեռ  
 Ու գային մի օր մանուկներ խնդուն,  
 Գրկեին սիրով, տաննին ինձ տուն,  
 Տարուկ սենյակում, գորովով անծայր  
 Մագերս կանաչ զուգեին պայծառ,  
 Պարեին շուրջս, անհոգ խնդային  
 Ու անհուն սիրով ինձ ողջունյա տային...»  
 — Հենց ասեց-չասեց՝ աղջիկը սառած  
 Ճոնվեց ձյուններում՝ եղեվնի դառած...

.....  
 Ու ամեն անգամ, ամեն նոր տարուն,  
 Երբ եղեվնու շուրջ երգում են, պարում  
 Մանուկները մեր խնդությամբ անշեջ—  
 Թվում է մի պահ, թե ա՛յ, նրանց մեջ  
 Գույն-գույն լույսերի ծիծաղը դեմքին՝  
 Այն որբ աղջիկն է կյանք առնում կրկին...

1940 թ.

## ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ, ՏԵՐ-ՉԱՐԻԿ

Մի ժամանակ, մեր գյուղում,  
Ժամին կպած հին հյուղում  
Դպրոց բացեց տերտերը՝  
Մտքում՝ մարդկանց քերթելը:  
Իր անունը Չարիկ էր,  
Ինքն էլ տեղով չարիք էր,  
Ոչ խիղճ ուներ, ոչ կանոն,  
Գիտեր լոկ փայտ ու քանոն:  
Մեկ էլ տեսար՝ հենց դասին  
Չեն էր տալիս Աբաշին,—  
— Չե՞ս իմանում, տո՛, Աբա՛ս,  
Մերդ լվա՞ց նոր կարա՛ս,—  
Կամ Գալոյին՝ փրփրած,—  
— Ա՛յ դու գիլի բրբրած,  
Հերիք չեղա՞վ զուր գրես,  
Չասի՞ մեր տուն ջուր կրես.—  
Կամ թե հոտաղ Նեսոյին,—  
— Ես ցո՛ւյց կտամ քեզ օյին,  
էլ չերեվա՛ս, սեվերե՛ս,  
Մինչեվ հախս չբերես. .  
էլ ի՛նչ դպրոց, ի՛նչ ուսում,  
Հենց իր շահն էր նա ուզում.  
Դպրոցը մի մահանա՛  
Տրոգում էր քահանան...  
Իսկ սաներիս իր պատիկ  
Պատվիրել էր նա խստիվ,—  
— Դո՛ւք, լակոտներ՝ր, ինձ էսօր

Պիտի հարգեք ինչպես հոր  
 Ու երբ էլ ես փոշտամ՝  
 Կանգնած լինեք, թե նստած—  
 Ձեռքից զցեք ամեն ինչ  
 Ու ծափ տալով ասեք ինձ.—  
 — Առողջություն, տեր-Չարիկ՝ 3  
 Մեր ջանը փոխ ձեր չարին:  
 Ու մենք էլ, միշտ հնազանդ  
 Տեր-հոր խոսքին «սրբազան»—  
 Կանգնած էինք, թե նստած,  
 Հենց որ տեսանք՝ փոշտաց՝  
 Մեր գործն էինք վեր զցում  
 Ու ծափ տալով զիլ հչում,—  
 — Առողջություն, տեր-Չարիկ՝  
 Մեր ջանը փոխ ձեր չարին...

\* \* \*

Բայց մի օր էլ, երբ դասին  
 Կարդում էինք միասին՝  
 Գողգոթալով ու լալով  
 Սենյակ մտավ մեր Գալոն՝  
 Ու վայ տալով իր օրը՝  
 Լալով պատմեց տեր-հորը,  
 Թե հորից ջուր հանելիս  
 Դույլն է գցել նա ձեռից...  
 Տերտերն էս որ իմացավ՝  
 Հերսին էլ չդիմացավ,—  
 Խեղճին թակե՛ց, մտրակե՛ց,  
 Մութ մարագում պինդ փակեց  
 Ու մի երկար թոկ առած,—  
 — Հետեվեցե՛ք ինձ,— գոռաց՝  
 Հետեվելով տեր-հորը՝  
 Հասանք մոտիկ ջրհորը.  
 Էստեղ նա շունչ բաշեց թիչ՝  
 Թոկը կապեց իր մեջքից,

Իսկ էդ թոկի մյուս ծերը  
Իսկույն տալով մեր ձեռք՝  
Որպես մի սեղ սատանա  
Հորը մտավ շատ անահ.  
Բայց... խոնաված հորի՞ց էր,  
Թե ամպամած օրի՞ց էր՝  
Հենց որ իջավ հորը թաց՝  
Իսկույն մի լավ փռշտաց...  
Իսկ մենք՝ միշտ էլ հնազանդ  
Տեր-հոր խոսքին «սրբազան» —  
Ականջներս խլշտած,  
Հենց իմացանք՝ փռշտաց —  
Պարանը բա՛ց թողեցինք,  
Տեր-հորը ցա՛ծ թողեցինք  
Ու ծափ տալով միասին,  
Զիլ կանչեցինք լիասիրտ, —  
— Առողջությո՛ւն բեզ, Չարի՛կ  
Էլ չե՛ս անի մեզ չարիք...

—  
Ու էդ օրից  
Դեռ հորից՝  
Խաբար չունենք  
Տեր-հորից:

1939 թ.

# Ա Լ Ա Գ Յ Ա Ջ

(Նվեր Ալիսանյան եղբայրներին)

Դար ու դարեր դարդոտ սրտին հույզի անուշ եռք ես տվել  
Հայոց երգի մեծ վարպետին ինչքա՛ն երգ ու վերք ես տվել  
Բայց չի՛ հասել այն մութ դարում բեզ՝ շղթայված ձեռքը  
մարդու

Եվ լուկ այսօր ազատ բազկով վարար ու վառ բերք ես տվել,

Կայան էիր մութ ամպերի՝ այսօր լույսի ջա՛հ ես դարձել,  
Դեն շարտել մշուշ ու մեզ՝ ելնող արփուն զա՛հ ես դարձել,  
Լույս գիտության սուրբ պարզած ամպերից վե՛ր,

աստղերից վե՛ր՝  
Խավարատենչ նենգ ուժերին աշխարհով մեկ ա՛հ ես դարձել

Լուսափթիթ բերդը կրժքիդ՝ մեր վեհության լա՛նջն է հիմի,  
Ծովերից-ծով ու ծեգից-ծեգ մեր փառքի զողա՛նջն է հիմի,  
Ջա՛ն, Ալագյա՛զ, ո՛ւր էլ նայես բո արծվենի, բոց աչքերով՝  
Լեռներից դեն, ծովերից դեն խոլ զարթոնքի կա՛նջն է հիմի

Հե՛յ, Ալագյա՛զ, հպարտացի՛ր, դու էլ դարիս շո՛ւնչ ես  
դարձել,

Սովետական ազատ հողում պայծառ կանչ ու հո՛ւնչ ես  
դարձել,

Մայր Կրեմլում աստղերն հիմի Արեվին են փառքդ  
պատմում.

Ջա՛ն, Մանթաշից Նրան պարզած հսկա ծաղկեփո՛ւնջ ես  
դարձել...

1948 թ.

## ԴՐՈՋՆԵՐ ԶՈՒՏՈՎ...

(Դաւաքտին Տաբիձեից)

Լուսացա՛վ.—հրաբորք արեմն է հառագել...

Դրոշնե՛ր շուտով...

Ազատութեանը մենք այնպե՛ս ենք ծարավել,

մնց զարկված եղնիկներն՝ աղբյուրին ջինջ ու զով,—

Դրոշնե՛ր շուտով...

Փառք նրանց, որ մարտում զոհվեցին վեհորեն,

Որ հողը ներկեցին բորք արյան շիթերով.

Նրանց հուշն աշխարհում ինչպես մոմ կվառեն,—

Դրոշնե՛ր շուտով...

Փա՛ռք ձեզ, որ դեռ հույսով կանչում եք.—

— Ամբացե՛ք,—

Որ դաժան մարտերում չզիտեք ահ ու դող.

Լուսացա՛վ... Միացե՛ք, միացե՛ք,

Միացե՛ք,—

Դրոշնե՛ր, դրոշնե՛ր... Դրոշնե՛ր շուտով...

1917 թ.

## Հ Ի Ն Ձ Ի Ն Ե Լ Ը

(Ա. Միրցխուլափայտից)

Օ՛, քանի տարի, քանի՛ պայքարի բովով է անցել,  
Հրդեհներին դեմ խոյացել որպես պատնեշ պողպատի.  
Վաղուց է, սակայն, ոնց հաղթող ռազմիկ՝ կռվից տուն  
դարձել՝

Հանգիստ է առնում հրեմլի ծանոթ սենյակի պատին:  
Երբ պատերազմի վիշապը ոռնաց երախը բացած,  
Երկիրը ցնցեց, երկինքը պատռեց ոնց հողմ ու սամում՝  
Նա, Յարիցինում, սեվ հորդանների ընդդեմ ծառացած —  
Ռեվոլուցիայի հար անդրդվելի կուրծքն էր պաշտպանում:  
Իր ուղով անշեղ անցել է ռազմի մրրիկներով ժանտ,  
Երբ օրն էր խեղդվում վառողի ծխում, դաշտերի վրա.  
Եղել է նրա եղբայրն հարազատ, ընկերն անբաժան,  
Հավիտյան անթեք ու անխոցելի որպես կուռ. զրահ,  
Ճեղքել է, անցել լողալով՝ կյանքի ծովը խստաշունչ,  
Թեվերը ներկել ալ հրացուքում բյուր հրդեհների  
Եվ որպես նշան մեծ եղբայրության ջերմ ու սիրասուն՝  
Հպվել է նրան հարազատ ձեռքը մեծն Լենինի:  
Երբ կռվից տուն էր դառնում գնդակված ու կարկտահար՝  
Ալ դրոշների մրրիկն էր նրան թեվերով շոյում.  
Օ՛, այժմ էլ, ասես, դեռ կրծքին նրա ցուցում է վառ  
Համբույրն մայրական, որպես մի աստղիկ ջինջ ու

շողշողուն:

Հիշում է, ասես, մարտերը հին-հին, կայծակ ու որոտ.  
Զի տեսել, սակայն, նոր պատերազմի հրդեհն ահագին,  
Եվ ցնցվում է միշտ, երբ իր առջեվից անցնում է խրոխտ  
Պողպատե մարդը՝ մարշալական նոր շինելը հագին:

\* \* \*

(Ի. Գրիշաշվիլուց)

Ամորվեցին վերք ու խոց,  
Ահա՛ գյուղը, տունը քո.  
Անցավ հողմը մահակոծ,  
Հառնեց քաղաքն իր եռքով:

Ճռնչում են սայլ ու կառք,  
Տուն են դառնում ծեր ու կին.  
Մբտերում սեվ, հողմազարկ՝  
Երգն է ծնվում ցնծագին:

Ծիտիկները գտան բուն  
Նորակառույց հարկի տակ.  
Հովն է ծառերն օրորում,  
Մնց հաղթության դրոշակ:

Գեղջուկը գոհ ու անցավ  
Կրթնեց շեմքին զովասուն.  
Արցունքն հալվեց, չքացավ,  
Ծիծաղն անցավ տնից-տուն...

=====

# Ի Մ Խ Ե Ղ Ճ Գ Լ Ո Ի Խ

(Սայաթ-Նովայի վրաց. երգերից)

Իմ խեղճ գլուխ, ասա, տեսնեմ, ի՞նչ էր էս,—  
Ողջ աշխարհում խաղը ես դառել, ջնջվել ես,  
Որ կողմ վազել, էնտեղ ընկել, մնջվել ես,  
Վերջն էլ էսպես բերախտ օրդ անիծել,—  
Ո՞ւմ մեղ դնեմ, յարաբ էս ո՞ւմ ձեռքից էր,  
— Սայաթ-Նովա, բոլորը բու խելքից էր...

Փայլում էի ողջ աշխարհում լուսի պես,  
Ոսկե դուծում դրած անգին շուշի պես,  
Գլխիս էս ի՞նչ բերի սեւ բայդուշի պես...  
Ինչ որ արի՛ դիւի իմ անմիտ վարքից էր,  
Ո՞ւմ մեղ դնեմ, յարաբ էս ո՞ւմ ձեռքից էր,  
— Սայաթ-Նովա, բոլորը բու խելքից էր...

Թագավորից մեջլիս տարած զարդն էի,  
Թավադներն տանը հարզի մարդն էի,  
Կարմիր կաթով զուգված անգին վարդն էի...  
Էս սեւ բուրձով սեւանալու դա՞րդն էի...  
Ինչ որ եղավ՝ իմ հոգեվոր տերից էր,  
Ո՞ւմ մեղ դնեմ, յարաբ էս ո՞ւմ ձեռքից էր,  
— Սայաթ-Նովա, բոլորը բու խելքից էր...

Բրինձ էի, զարի դառնալն ի՞նչիս էր,  
Բագե էի, ուրուր դառնալն ի՞նչիս էր,  
Ես աշխարհիկ՝ քահանանալն ի՞նչիս էր,  
Ասա, տեսնեմ, արեղանալն ի՞նչիս էր,  
Բերախտ գլխիս էս բոլորը դեռ քիչ էր...  
Ո՞ւմ մեղ դնեմ, յարաբ էս ո՞ւմ ձեռքից էր,  
— Սայաթ-Նովա, բոլորը բու խելքից էր...

## ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻՆ

(Ա. Արաշելուց)

Սայաթ-Նովա, ո՞վ կա քեզ պես, ո՞վ, ասա՛,  
Սիրո, կյանքի, լույսի վարար ծով, ասա՛,  
Քարթլին մի բաղ՝ դու չինար ես հով, ասա՛,  
Ամառ-ձմեռ հագիդ դալար մով, ասա՛:

Հար անթառամ սերն ես պարզել թասի պես,  
Թառ-քյամանչեն վառել սրտիդ մասի պես,  
Երեք եղբոր սերը գովել խասի պես,  
Սայաթ-Նովա՛, սիրտդ հույզի բո՛վ ասա:

Երեք լեզվով մի սրտի ձեն ես ածել,  
Մեղլիսներում սեր ու խինդ ես տարածել,  
Դարդոտ սրտում ժպտուն վարդեր ես բացել,  
Սիրո բլբուլ, էրված սրտին հո՛վ ասա:

Ի՞նչ կար ուժեղ քո սազի, քնարի պես,  
Սրտիդ դուժուց խոսքն ես հանել զառի պես,  
Թե պալատում սիրտդ էր հուզվում լարի պես՝  
Խրճիթներում երգել ես խինդո՞վ, ասա՛...

Թրխիսիին երբ սպառնացին խարի պես,  
Ի՞նչ քո երգով ելար Դավթի սարի պես,  
Չորբի առաջ բայում էիր փարի պես,  
Ո՞նց երգեցիր արնաքամ սրտով, ասա՛...

Երբ այրվում էր Նարիդալան ըոցերում—  
Երգում էիր՝ սուրն ու սազը քո ձեռում,  
Երբ հուրն ընկավ սրտիդ թարուն խոցերում՝  
Ո՞նց մարեցիր անդուլ երգելով, ասա՛...

Սրով ընկար, տարար վերք ու արտասուք,  
Բայց մեզ թողիր երգիդ գանձերն երկնաշուք,  
Երգի՛ր, վրաց արքայական մեծ աշուղ,  
Սայաթ-Նովեն չի՛ անցել քնով, ասա՛...

# Գ Ա Չ Ո Ի Յ Ն

(Մ. Լեւոնտովից)

Սիրում եմ քեզ, կուռ դաշույն իմ հրածին,  
Մառն ու լուսն դու իմ նղբայր հարազատ.  
Սրտում վրեժ՝ քեզ կուել է վրացին,  
Կովի համար սրել չերքեզ մի ազատ:

Առել եմ քեզ շուշանաբույր մի ձեռքից,  
Հանց անջատման պահի նշան մի անգին.  
Այնժամ արյուն չէ կաթել բո եզերքից  
Այլ սուրբ արցունք—վշտից ծնված լույս հակինթ:

Օ, ինձ հառած սեվ աչերն այն հեկեկուն  
Այնժամ լցված լուռ թախիծով անմեկին՝  
Ինչպես շեղբո՛ւ բոցերի մեջ բեկբեկուն՝  
Շողո՛ւմ, շողո՛ւմ, մարո՛ւմ էին մերթ կրկին:

Ընկե՛ր, սիրո անբառ վկա սրբազան,  
Վտարանդիս քեզ կնայեմ բանի կամ.  
Հոգով արի՛ միշտ կլինեմ անսասան,  
Քե՛զ պես, քե՛զ պես, իմ պողպատե բարեկամ:



# Մ Ա Ն Ո Ւ Ղ Ա Կ

(Ռ. Մարգիւանուց)

Երբ լուեց մի սլահ շառաչը ռազմի,  
Զէր սուլում օդում էլ ոչ մի գնդակ—  
Ապրիլի գալուստն հանկարծ զգացի,  
Թփի տակ տեսա մի հեզ մանուշակ:

Մոտեցա ժպտով, ձեռք տվի նրան,  
Պոկեցի հուզված, դողդոջ մատներով.  
Մի փամփուշտ դրի որպես ծաղկաման  
Ու ժպտաց այնտեղ ծաղիկն իմ գերող:

Կար մի ժամանակ... մեր կյանքն էր խաղաղ,  
Գրգվում էինք մենք ծաղկանց սիրավետ  
Եվ «տիր»-ում չարի սեվ դեմքին հաճախ  
Գնդակն էր տեղում մեր ծիծաղի հետ:

Այն օրից, ահա, ամիսներ անցան,  
Այն խաղաղությունն էլ չկա արդեն.—  
Լինելիք ինձ մոտ կուզեի այնքա՛ն,  
Բայց, ասա, հոգի՛ս, ասա՛, ի՛նչ անեմ:

Իսկ զիտե՞ս, երեկ ում եմ սպանել,  
Օ, ո՛չ թիթեղյա ոտխին այն սին,  
Որին ես «տիր»-ում զարկել եմ հաճախ,—  
Այլ մի իսկական, արնախում Հանախ:

Բայց մի զարմանա, որ անհագ մահի,  
Խոլ գնդակների տարափի ներքո—  
Որպես մի մանուկ, այս ահեղ պահին  
Հմայվել եմ ես մի մանուշակով:

Եվ հասկանո՞ւմ ես, ի՞նչու եմ գրում,  
Ի՞նչու եմ հայտնում բեզ հույզերը իմ,  
Որ զգա՛ս—անգամ կռվի թեժ հրում  
Ես չե՛մ մոռացել սիրել քնքշազին...

... Ժպտաց փամփուշտից մանուշակն անգին,  
Մանկան բնքությամբ նայում եմ նրան.—  
Մի նոր ավյունով զարկում եմ չարին,  
Ու սերդ է ծաղկում իմ սրտի վրա:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
1. Կարմիր ազգմիկների երգը . . . . .	3
2. Գարնանային ազմերդ . . . . .	4
3. Հրավառ պորտրեն . . . . .	5
4. Տաղ անպարտության . . . . .	6
5. Մեզ հետ եք դուք... . . . . .	8
6. Սահմանի վրա . . . . .	9
7. Հաղթանակի տարեմուտ . . . . .	10
8. Արևի քանդակը . . . . .	11
9. Հերոսացում . . . . .	13
10. Հայրենիքիս սիրտն է խոսում . . . . .	14
11. Բաղրամյանին . . . . .	16
12. Իմ «Մաքսիմ Գորկին» . . . . .	17
13. Մարտիկի հույզերից . . . . .	18
14. Հրանոթներ . . . . .	19
15. Երգ Հաղթանակի և էլեկտրական լապտերի մասին . . . . .	20
16. Իմ ձայնը . . . . .	22
17. Հաղթանակի հայելին . . . . .	23
18. Երգ հաղթանակի . . . . .	24
19. Տաղ ցնծության . . . . .	25
20. Տարեմուտը Մոսկվայում . . . . .	26
21. Բերքի երգը . . . . .	27
22. Երգ կառուցողի . . . . .	28
23. Ֆիզկուլտուրային քայլերդ . . . . .	29
24. Ռուսթավի . . . . .	30
25. Դեպի այգաբաց . . . . .	31

26. Վաժային . . . . .	32
27. Բողոքիկյան մամուլին . . . . .	33
28. Մայիսակցյան . . . . .	34
29. Դուրյանի հետ . . . . .	35
30. Սայաթ-Նովա . . . . .	36
31. Երգչի փառքը . . . . .	37
32. Պարզեմ . . . . .	38
33. Գրաշար վարպետին . . . . .	39
34. Փ ա ո ք . . . . .	40
35. Գործարաններ . . . . .	41
36. Խոսք արդարության . . . . .	42
37. Մորս հետ . . . . .	44
38. Բանյակներ . . . . .	46
39. Թիթեռ . . . . .	48
40. Եղեվնի . . . . .	50
41. Առողջություն, տեր-Չարիկ . . . . .	51
42. Ալագյալ . . . . .	54
<b>ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	
43. Դրոշներ շուտով . . . . .	55
44. Հին շինելը . . . . .	56
45. * * * . . . . .	57
46. Իմ խեղճ գլուխ . . . . .	58
47. Սայաթ-Նովային . . . . .	59
48. Դաշույն . . . . .	60
49. Մանուշակ . . . . .	61




ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



220028229

Գրքը 3 ռոտի. 40 կմո.

28685



ОВАНЕС КАРАЯН

Р О Д Н О Е

(Сборник стихов на армянском языке)

Госиздат Грузинской ССР

Тбилиси — 1948